

**ԷՇՄԻԱՆՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՆԱԳՈՅՆ ԶԵՂԱԳԻՔ
ՇԱՐՍԿԱՆՆԵՐԸ.**

Մօտ չորս տարի առաջ լոյս անսաւ իմ անդրանիկ ուսումնասիրութիւնը հայ Շարականի մատին *): Անդիերէն, ֆրանսերէն, գերմաներէն և հայերէն հրատարակուած մի քանի քննադատութիւններից, որոնք բոլորն էլ ողջունում էին այս երկի հրատարակութիւնն ու իմ առաջին փորձի յաջողութիւնը, ինձ համար ամենից աւելի հետաքրքրական էին Ֆ. Ն. Ֆինկի յարձակումն ու Ֆ. Կոնիքերի մի նկատողութիւնը, որոնց առթիւ ինձ վերայ պարագարից խօսելու իմ աշխատութեան ընթերցողների հետ վերջապէս լոյս ընծայելով իմ ինքնազարդանութիւնը **): Ֆ. Ն. Ֆինկի անհամբերատար ոգու արտադրութիւն յարձակումների դէմ՝ ժամանակ եմ համարում նախ պարզել Ֆ. Կոնիքերի ակնարկած թիւրիմացութիւնը և ապա թէ հրատարակել ուսումնագիրութեանս շարունակութիւնը:

Թէպէտ և ես իմ վերոյիշեալ աշխատութեան 29—30, 59 և 103—104 էջերում շատ պարզ կերպով ընդհանրացրել ու յիշատակել էի, թէ ինձ յայտնի մատենադարաններից և ոչ մէկում, որոնց շարբում հարկաւ ամենից առաջ էջմիածնում, չկայ և ոչ մի Շարական, որ զրուած լինէր Ներսէս Շնորհալուց առաջ, այնուամենայնիւ Ֆ. Կոնիքերը իւր քննադատութեան մէջ ***): ինձ յիշեցնում է, թէ էջմիածնի մատենադարանի թ. 1534 (ըստ Կարինեանցի ցուցակի) ձեռագիրը զրուած է Հաղբատում 1019 թուին Եւ այս ազգարարութիւնն ինձ համար էլ աւելի զարմանալի է թուում այն պարզ պատճառով, որ յարգելի գիտնականը նոյն

*) Das armenische Hymnarium, Studien zu seiner geschichtlichen Entwicklung, von Nerses Ter-Mikaëlian, Archimandrit von Edschmiasin, Leipzig, Hinrichs'sche Buchhandlung, 1905, III—IV und 110 in 8^o, M. 4, 50.

**) Prof. Dr. F. N. Finek und seine Kritik über «Das armenische Hymnarium» von Archimandrit Nerses Ter-Mikaëlian, Edschmiasin, Klosterdruckerei, 1908, A—C, 7—32.

***) The Journal of theological Studies, 1906, Januar, p. 292.

քննագատութեան մէջ իմ աշխատանքը with admirabe precision (ibid, p. 292.) կատարուած համարելով հանգերձ՝ միանգամայն մոռացութեան տալով իմ գրածը մի փոքր առաջ յիշուած էջերում՝ թիւրիմացութեամբ կարծում է և կամ կասկածում, թէ ևս մի գուցէ աչքից փախցրել կամ անուշադիր եմ եղել դէպի Եարինեանցի ցուցակի համապատասխան տողերն ու այդպիսով չեմ օդուուել այդ իր հնագոյն ձևագիր Շարականից:

Կոնիքերի այս ազգարարութիւնը կարդացողը կարող է մոլորութեան մէջ ընկնել և կասկածել. թէ կջմիածնում մի գուցէ յիրաւի մի այդպիսի պատկառելի հնութեան ձեռագիր Շարական է եղել, ևս այդ կամ չեմ իմացել կամ անտես եմ արել և իմ տեսութիւններն ու ենթազրութիւնները կառուցել ժԳ դարի և նորագոյն ձեռագրերի վերայ:

Խնդիրն ըստ էութեան քննելուց և ապացուցանելուց առաջ, թէ Ժ. գարի ձեռագիր Շարական չի եղել կջմիածնի մատենագարանում ոչ վերջին մօտ կէս գար ժամանակամիջոցում ոչ էլ կարինեանցի ցուցակը տպագրութեան համար պատրաստելու ժամանակ՝ կարեոր եմ համարում յայտարարել հետեւալը. Իմ աշխատութիւնը Բերլինում 1904 թուին զրի առնելուց առաջ Մամբրէ վարդապետ Մելիք-Ադամեանի սիրալիր օժանդակութեամբ նիւթեր և տեղեկութիւններ ժողովելու միջոցին Սահակ վարդապետ Ամատունու բարեհաճ ցուցմունքի և հաւաստիացման նորհիւ ինձ արգէն յայտնի էր, որ այդպիսի հնութեան ձեռագիր Շարական չկայ կջմիածնի մատենագարանում. Նոյն տարուայ աշխանը վերագունալով Մայր Աթոռ և անմիջապէս աչքի անցնելով կջմիածնի մատենագարանի բոլոր ձևագիր Շարականներն ու յատկապէս կանգ առնելով այս վիճելի համար 1535—1573 (ոչ 1534, ինչպէս սխալ մամբ ասում է Կոնիքերը) և նշանաւոր համար 1588 ձեռագրերի վերայ՝ ևս խորագիս համոզուեցի, որ Կարինեանցի ցուցակը չարաչար սիսալւում է սոցանից առաջնի գրութեան ժամանակի նկատմամբ, ինչպէս և Սահակ վարդապետ Ամատունին երկրորդի գրութեան ժամանակի նկատմամբ իւր արած միանգամայն անընդունելի ենթազրութիւններով*): Ես միայն ցաւել կարող եմ, որ հնարաւորութիւն չունէի 1904 թուի յուլիսին տպագրութեան համար միանգամայն պատրաստ և հազիւ 1905 թուի օդոստոսին լոյս տեսած աշխատութեանս կցելու նաև իմ ասելիքն այս երկու ձեռագրերի մասին. եղածն էլ կարողացայ տպագրութեան յանձնել միայն այն ժամանակ, երբ Մայր Աթոռի ձեմարանում ձրիարար

*) Արարատ, 1894, էջ 78—88.

դաս էի աւանդում, և գոնչ այն ժամանակի տեսուչ ալ, Կ. Կոստան-
նանը բարի եղաւ խրախուսելու իմ՝ աշխատանքը՝ տալով ինձ այդ
նպատակով մի հարիւր ոռութիւն, ինչ որ զլացել էին անել ուրիշները
մինոյն Էջմիածնի գանձարանից և կամ այլ եկեղեցական դրամներ-
ից:

Բուն խնդրի լուսաբանութեանն անցնելով՝ նախ պիտի ար-
ձանադրեմ հետեւելու:

1. Արդարի կարինեանցի ցուցակի մէջ Շարականների շար-
քում երկրորդ անգը՝ համար 1535-ի ներքոյ, որ հաւասար է արդի
1575 համարին, կարգում ենք. «Եոյն գրեալ ի մագաղաթի ի վանս
Հաղբատայ ի հայրապետութեան Պետրոսի Ա. Գետադարձ կաթու-
ղիկոսի ի Յովհաննէս զրչէ ի թուրին Հայոց ՆկԸ. 1019, ունի զյի-
շատակարան»:

2. Այս տպագիր ցուցակից Էջմիածնի մատենադարանում
գործածուղ օրինակում վերջին տողերի առթիւ նոյն էջի լուսանց-
քում սև թանաքով զրուած է հետեւել ծանօթութիւնը. «Ծայրէ
ծայր յիշեալ Շարականը շրջեցի, թերթեցի, բայց և այնպէս չգտայ
ոչ Պետրոս Գետադարձ հայրապետի անունը և ոչ ՆկԸ թուրականը,
որի մասին պէտք է ենթադրել կամ այդպիսի Շարական եղել է,
աակայն ժամանակին փոխարինուել է սորա հետ, և կամ թէ ցու-
ցակ կազմողի սխալմանց արդիւնք է դա, որին ես էլ չեմ հաւա-
տում: Սահակ վարդապետ Ամատոնի»:

3. Արդի համար 1573 ձեռագիր Շարականի կազմին կպցրած
թերթիկի վերայ կարինեանցի ցուցակը կազմողներից այն անձի
ձեռքով, որի պատրաստած նման թերթիկները մինչեւ այժմ էլ
կցուած են այդ ցուցակի ձեռագրերի ստուար մասին, գրուած է. «Հմբ. 2. Շարական երկուասանածալ բոլորագիր զրեալ ի մագա-
ղաթի ի Յօհաննէս զրչէ ի հայրապետութեան Պետրոս Ա. Գետա-
դարձ կթղկսի յամի աղքական ՆկԸ. և Փրկչական 1019, ի վանս
Հաղբատայ Ունի յիշտկը»:

4. Այս թերթիկի վերայ ես կարդում ենք Սահակ վարդապետ
Ամատունու սոյն տողերը. «Ծայրէ ի ծայր յիշեալ Շարականը շրջ-
եցի, բայց և այնպէս չգտայ ոչ Պետրոս Գետադարձ հայրապետի
անունը և ոչ ՆկԸ թուրականը, որի մասին պէտք է ենթադրել, կամ
այդ թիւն և հայրապետի անունը կրող շարական եթէ եղել է, սո-
կայն ժամանակին փոխարինուել է սորա հետ և կամ թէ դա ցուցակ
կազմողի սխալ պէտք է համարել: Սահ. ար.»

Դեռ արդի թ. 1573 ձեռագիրը չբացած, չթերթած, չուսում-
նասիրած և չապացուցած, թէ այս Շարականը հէնց այն մինոյն
ձեռագիրն է, որը տեսել, շօշափել, թերթել, յիշատակարանը գտել
և 1535 համարի ներքոյ պահարանում զետեղել է կարինեանցի ցու-

ցակը կազմողը՝ կարող եմ հաւաստիացնել Սահակ վարդապետ Ամառտունուն, որ զոնէ այս դէպքում աւելի քան անհաւանական է նախկին ձեռագրի փոխարինուած կամ զողացուած լինելու ննթագրութիւնը։

Ինչպէս տեսանք մեր արձանագրած 4-րդ դիտազութիւնից՝ մեր բազմաշխատ միաբանակից Սահակ վարդապետ Ամառտունին նկատել, ստուգել և հաւաստիացել է, թէ էջմիածնի մատենադարանի թ. 1573 ձեռագիրը չի կարող ունենալ Կարինեանցի 1535 համարի ներքոյ նշանակուած հնութիւնը զեռ իւր արեղացութեան օրիբում Քանի որ Սահակ վարդապետի արեղացութիւնն ընկնում է 1887 և 1893 թուականների մէջ՝ ապա ուրեմն նախկին հնագոյն կարծեցեալ ձեռագրի փոխարինուելու կամ զողացուելու մասին խօսելու դէպքում իսկ պէտք է աչքի առաջ ունենանք այն ժամանակամիջոցը, որ ընկնում է Կարինեանցի ցուցակի պատրաստութեան՝ շուրջ 1860—1863 և այս երկու թուականների մէջ։ Յամենայն գէպս պարզ է, որ 16—22 տարի սորանից առաջ այլ ևս էջմիածնի մատենադարանում չի եղել մի ձեռագիր Շարական, որ կրէր ՆԿԲ—1019 թուականը։ Առ վայր մի ընդունելով, թէ յիրաւի մի այսպիսի հնութեան ձեռագիր երբեմն գոյութիւն է ունեցել էջմիածնի մատենադարանում, կուզէի իմանալ, ավ կարող էր լինել այն զողացողը կամ փոխարինողը սորանից 20—50 տարի առաջ։ Անտարակոյս մի այսպիսի չարիք գործող անձն պիտի լինէր կամ հնութիւնների սիրահար, կամ մի պարզ գող. ձեռագիրը վաճառելու, փող վաստակելու համար և կամ Շարականի ուսումնախթեամբ անչափ մոլեալ և զակատեալ ոմնու Յայց մնանք դիտենք, որ Շարականը սիրել ու նորանով իրօք զբաղուել է Հ. Գ. Աւետիքեանից, որի «Բացարութիւն Շարականաց» աշխատութիւնը լոյս է տեսել 1814 թուին, և ոչ ոք այն սիրով ու մոլութեամբ, որպէս զի մի վայրկեան անգամ կարելի լինէր կասկածել, թէ մի դուցէ մի այդպիսի անձն աններելի միջոցով իւրացրել է մեզ հետաքրքրող ձեռագիրը զիտական նպատակով։ Ո՞ւր է այսքան ժամանակ մի այդպիսի անհաւատարմութեան արդիւնք զբական վաստակը, մինչդեռ նման գէպքերում կարծ ժամանակամիջոցում տպագրութեան են յանձնում բնագրերը և կամ նոցա վերայ եղած ուսումնասիրութիւնները։

Մենք զիտենք նաև, որ մինչե այսօր էլ զիտական աշխարհին անյայտ է մի ձեռագիր Շարական, որ գէթ ստուերական նմանութիւն ունենար մեզ զբաղեցնով ձեռագրին։ Ո՞ր հնութիւնների սիրահարը պիտի քանքարաթաղոց լինէր և տասնեակ տարիների ընթացքում ծածկէր այդ զանձը ձեռագրով հետաքրքրողներից, որոնց միջոցով զգալի կերպով ձոխացել են մատենադարանները

մանաւանդ վերջին կէս դարի ընթացքում: Ո՞ր փոքր ի շատէ մի այդպիսի պատկառելի հնութեան ձեռագրի նշանակութիւնն ու արժեքն ըմբանող անձն պիտի լոէր ու գէթ ում և իցէ և կամ մամուի մէջ չյայտարարէր. թէ լսել կամ տեսել է, որ ահա այս ինչ տեղը մի այդպիսի ձեռագրիր կայ: Ո՞րտեղ է այժմ այդ հնագոյն կարծեցեալ ձեռագիրը, որ հայկական, սուսական և կամ եւրոպական մատենագարանում, եթէ գողացնղը կամ փոխարինողը նպատակ է ունեցել մեծապնի վաճառել և փող վաստակել: Ես զիտեմ, որ այդ հնութեան ձեռագիրը Շարական չկայ ոչ էջմիածնի. Վիեննայի զոյգ և Վենետիկի մատենագարաններում, ոչ Մոսկուա, Պետական թագավորութիւն, Շերլին, Միլնիսէն, Լոնդոն և ոչ այլ աւելի մանր ձեռագրասներում: իսկ Մեսրոպ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Տէր-Մովսէսիանը, որ ձիդ տարինսերի ընթացքում զրազուած է հայկական ձեռագրերի ցուցակ պատրաստելով և այցելել ու տեսել է հայ ձեռագրերի ամեն մի փոքր ի շատէ աչքի ընկնող ժողովածու, հաւասարիացնում է ինձ, թէ ոչ մի տեղ չի տեսել մի ձեռագրիր Շարական, որ զրուած լինէր Ներսէս Շնորհալուց առաջ:

Այս խորհրդածութիւնից յետոյ թերթենք ձեռագիրը և թողնենք, որ խօսեն հէնց իրենք՝ ներքին հիմունքները:

Սոյն Շարակնոցը զրուած է 1a—348a էջերի վերայ՝ երեք ձեռքով: Առաջին ձեռքը զրել է 1a—334b էջերը մազազաթի վերայ, երկրորդը՝ 335a—338a գարձեալ մազազաթի վերայ, իսկ երրորդը՝ 339a—348a թղթի վերայ: Առաջին մասը մի լաւ պահպանուած ամբողջական Շարական է, որից ընկել են միմիայն վերջին մի քանի թերթերը՝ արդի 334.-ի և 335.-ի մէջ. այս ամբողջական Շարականի ոչ մի էջում և ոչ մի յիշատակութիւն չկայ զրողի կամ ստացողի մասին: Երկրորդ՝ մի այլ ձեռքով զրուած մասը թերի է, բայց սկզբից. այժմ սկսուամ է 335 առդ և «զործ անուամբ ի խաչ և յեկեղեցի. առաւել պայծառ ի զրուխըս գագայ», որ—Ա. Սարգսի Ամենասուրը երրորդութեան շարականի վերջին տան *): Այսուղ զրուած են. և յանսահման ծովէն 335a—b և Յաւուրց վերջին ժամանակի 335b—337a շարականները, ապա կայ և մի յիշատակարան՝ 337b—338a: Երրորդ մասը զրուած է մի շատ աւելի նոր ձեռքով, թերես Ժ. Ժ. Դէկտուամ, և պարունակուամէ. ա. Այսօր զրուարձացնալ ցընծայ եկեղեցի 339a—342a. բ. Լերինք ամենայն այսօր ցընծացէք 342b—343b. դ. Արեելք զեւարփին 344a—347a և դ. Ամենասուրը երրորդութեան ընտրեալ ժառայ 347b—348a. 348 հ. բաց է: Բուն ձեռագիրը կամ առաջին մասն սկսուամ է Երգեցէք որդիք սիովնի երգ նոր շարականով 1a—4a—մեր արդի տպագիր

*.) Հրատարակութիւն Էջմիածնի, 1861 թ., էջ 145.

Շարակնոցի հէնց առաջին կանոնին (իջրիածին, 1861 թ., 1—6 լ.ջ). ապա 4ա—6ե յաջորդում է կանոն ծննդեան սրբոյ Սատուածածնի՝ Որ նախիմաց . . . —մեր արդի տպագրի երրորդ կանոնին (անդ, 7—12). այնուհեան զրի է առնուած 6ե—9ե կանոն աւետեաց Սատուածածնին՝ Խորհուրդն անձառ—մեր տպագրի երրորդ կանոնին (անդ. 12—18): Յեսոյ ևս շարունակ պահպանելով մեր արդի Շարականի դասաւորութեան կարգը՝ ձեռադիրը 52ա, 57ի, 63ի, 72ի, 82ի, 91ա և 100ի ու սոցա յաջորդ էջերում տալիս է Բուն քարեկինդանի և Մեծի պահոց կիւրակէ օրերի օրհնութիւնները, ինչպէս նաև 115ա—119ի «Երգ աւեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս մեծի Ուրբաթու զիշ. Այսաւը անձառ լուսոյն ծագումն . . .», այլ և 119ի—121ի «Եորոգաւզ ափեզերաց որ զգեցուցեր մեզ . . .»: Այնուհեան ևս ձեռագրի այս մասը պահում է մեր արդի տպագրի դասաւորութիւնը, 332 ա—ով վերջացնում աւագ օրհնութիւնները և անմիջապէս զրի առնուած Սատուած անեղ, անժամանակ . . . 332ա—334ի, որ և լնդհատուած է թերթ ընկած լինելու պատճառով «հաւատացեալքն ի քեզ բերկին» բառերով—իջմ. տպ. 698 էջ:

Ձեռագրի այս համառօտ նկարագրութիւնից յետոյ անցնելով եղրակացութիւններին՝ պիտի ասենք.

1. Ամեն կասկածից վեր է, որ այս ձեռագրի հիմնական մասը՝ 1ա—334ի զրուած է Ներսէս Շնորհալուց յետոյ. Մեծի պահոց կիւրակէ օրերի օրհնութիւնները, Այսօր անձառն ու Նորոգող ափեզերացը, որոնք այստեղ զրի են առնուած ոչ իրրի յաւելուած, այլ հէնց իրենց համապատասխան տեղերում, Շնորհալու զրուածքներն են: Նոյն հիմունքով կարող ենք մի քայլ ևս առաջ գնալ և ասել, որ ձեռագրի այս էական մասը չի կարող զրուած լինել Ժ.Գ. գարփուած, քանի որ Երգեցէք որդիք սիովելի երգ նորի հեղինակ Յակով կաթողիկոս կլայեցին († 1287) և Որ նախիմացի հեղինակ Վարդան վարդապետն († 1271) ապրել ու վախճանուել են այդ դարում: Ինչպէս մի փոքր վերի ասացինք, այս մասում ոչ յիշաւակարտն կայ, ոչ զրչի և կամ ստացողի անուն և ոչ էլ որ և է թուական:

2. Յաջորդ զրիչը նպատակէ ունեցել ամբողջական Շարականը կամ այս ձեռագրի ստացին մասը լրացնելու և իրրի յաւելուած կցել է յատկապէս վարդան վարդապետի Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ ու ի յանսահման ծովին և Յովհաննէս Պլուղի (շուրջ 1250—1325) Յաւուրց վերջին ժամանակի շարականները: Այս կարող էր լինել ոչ չուտ քան Ժ.Գ դարու վերջերը և ոչ ուշ քան Ժ.Գ դարը, քանի որ այստեղ զրի չի առնուած կիրակոս Երվնկացու Սրիելք գերարդիինը: Այսպէս ուրիմն և այստեղ 337ի—

338ա էջերում նոյն ձեռքով զրուած յիշատակարանը լաւաղոյն գէպօւմ ժԴ—ժԴ դարի դրու է և ոչ աւելի վազ ժամանակի:

3. Երրորդ զրիչը նոյնպէս նպատակ է ունեցել լրացնելու այս Շարականը, նա զրի է առել Յովհաննէս Պլուզի Այսօր զուարձացեալն ու Լերինքը, Կիրակոս Երզնկացու Աբենելք զերարփինը և ապա, որ ամենակարեսըն է մեզ համար, նորից ամբողջովին արտադրել է Ամենասուրբ Երբորդ զուարձանը ընտրեալ ծառաց շարականը, այսինքն հէնց այն միենոյն շարականը, որի վերջին բառերով է սկսւում այս ձեռագրի երկրորդ՝ սկզբից թերի մասը 335 առաջ: Այս նշանակում է, զեռ երրորդ զրչի օրով ԺԶ—Ժէ զարում մեզ զրադեցնող ձեռագրի միջից և յատկապէս 335-ից առաջ, ինչպէս որ այժմ էլ 334-ի և 335-ի մէջ, թերթեր են ընկած եղել, Ամենասուրբ Երրորդութեան շարականն այն ասափճան աղճատուած, որ կարիք է զգացուել նորից ամբողջովին արտադրելու, Այսպիսով շատ հաւանական է, որ կարինեանցի ցուցակը կազմովն ես նոյն վիճակի մէջ պիտի տեսած լինի այս ձեռագիրը՝ 334 և 335 թերթերի մէջ եղած թերիով, ինչպէս 1887—1893 թուականներին վահակ վարդապետ Ամատանին, որ ոչ Պետրոս Գետագարձի անունն է գտել և ոչ Նկը թուականը, և տողերիս զրողը՝ 1904 թուից մինչև այսօր Հարկաւ այսակ կարող է լինել մի այլ կարծիք, թէ դուցէ կարինեանցի ցուցակը կազմելու ժամանակ արդի 334 և 335 թերթերի մէջ գեռ ես եղել են խախտուած, բայց զեռ ես ընկած թերթեր, որոնց վերայ և մի յիշատակարան՝ Հաղբատ վանքի, Պետրոս Ա. Գետագարձ կաթուղիկոսի և Յովհաննէս զրչի անուններով ու Նկը թուականով. սակայն այն ենթադրութիւնը մեզ համար անհաւանական և անընդունելի է հետեւալ պատճառներով, նախ եթէ այդ ենթադրեալ թերթերը կարուած ու վայր ընկնելու և կարչելու վտանգի մէջ լինէին, ցուցակագրողը տարրական հասկացողութիւն պիտի ունենար մի այդպիսի պատկառելի հնութեան ձեռագրի յիշատակարանը կարելու և կորսաից աղատելու. Երկրորդ՝ հաղիւ թէ որ և է անմիտ և կամ չարամիտ ԺԹ. դարու 60—80-ական թուականներին այդ ենթադրեալ յիշատակարանը կտրէր, գողանար ու ձեռագրի հնութեան արժեքը նսեմացնէր. և երրորդ՝ բնաւ կարիք էլ չլայ այսպիսի ենթադրութիւն անելու և պատէպստ ընկնելու. քանի որ ամեն մի ձեռագրի սովորաբար ունենում է մի հատ զլիաւոր յիշատակարան, այս գէպօւմ զլիաւոր յիշատակարանն այսօր էլ կայ և անաղարտ պահպանուած է ձեռագրի երկրորդ մասում՝ 337b—338a էջերում՝ Հաղբատ վանքի և Յովհաննէս զրչի անուններով, Վերջապէս կարող է լինել նաև մի ուրիշ առարկութիւն, թէ դուցէ ԺԹ. դարի 60—80-ականներին

մի ուն նախկին հնագոյն ձեռադիրը յաջողեցրել է զողանալ Մայր Աթոռի մատենագարանից, բայց որպէս զի զողութեան, հետքը կորցնէ՝ Կարինեանցի ցուցակի համապատասխան համարի ներքոյ է առել ու պահարանում զետեղել արդի ձեռագիրը, որի մէջ նոյնպէս իշխանակութիւն կայ Հաղբատ վանքի և Յովհաննէս պրչի մասին։ Այսպիսի առարկութիւն անսղին մենք կը հարցնէինք, ինչ նոյնատեր պիտի կատարուէր այս գողութիւնը մեղանից 30—40 տարի առաջ, որ մատենագարանին է վաճառուած այն հին կարծեցեալ թանկադին ձեռագիրը, ինչպէս է, որ մինչև այժմ ոչ մի ուսումնաշորութիւն չկայ այն ձեռագրի հիման վերայ, դիւրին բան էր գարձեալ Հաղբատում ու մի այլ Յովհաննէս պրչի ձեռքով պատրաստուած ձեռագիր վանելն ու նախկինի տեղը գնելը . . .

4. Այս ամենից յեսայ մեր խորին համոզմունքն է, թէ Կարինեանցի ցուցակի 1535 և արդի 1573 համար ձեռագիրը հէնց այն մի և նոյն Շարականն է, որ եղել է Էջմիածնի մատենագարանում այդ ցուցակագրութեան միջոցին և կայ մինչև այսօր էլ առանց փոխարինուելու և յիշատակարանը կամ այլ որ և է թերթ կորցնելու։ Մեզ մնում է միայն հնարաւորութեան չափ բացարել, թէ ինչպէս է որ ցուցակագրովը սիսալուել ու յիշատակարանին թիւր մեկնութիւն տալով մէջ է բերել նաև Պետրոս Գետագարձի անունն ու ՆԿԲ.—1019 թուականը։

Ձեռադրիս երկրորդ մասում՝ երկրորդ ձեռքով՝ 337a—338b էջերում գրուած է, Փառք համագոյ անբաժանելի և միասանական սուրբ երրորդութեան հաւը և որդուոյ և՛։ Գրեցաւ շարունակ՝ ածաշունչ տառի շարականացաւ ի թվինութեն հայկակագան տումարի,

Զեսամիք սրբասէր կրաւնաւորի և զեղեցկաչար գրչապետի. յովաննէս գրչի. և հոյակապ և հըռչակաւոր ս' ուիսաւ հաղբապատայ. . . . Յիշատակ ինձ և ծնաւղացն իմոց. . . . Արդ՝ որք վայելեք ի յուսումն և ի յաւրինակ. յիշեցեք ի ք' ո զ' ար յովաննէս քաջ քարտոզ և զվերոյ գրեալս ի սմա. և զատացող. . . . Նոյն յիշատակարանից իմանում ենք նաև, որ գրուած է «ի յառաջնորդութենն ս' ու ուխարի տ' ածատուր ահենապի» Այս յիշատակարանի առթիւ դիտելի են. ա) ձեռադրիս երկրորդ մասն, ուր զետեղուած է նաև սոյն յիշատակարանը, ինչպէս վերի ասացինք և այժմ կրկնում ենք, ԺԳ—ԺԴ դարի գործ է. բ) յիշատակարանը գրուած է սատացողի ձեռքով, որ և Յովհաննէս գրչին մեծարում է օսրբասէր կրաւնաւոր, զեղեցկաշար գրչապետ և քաջ քարտոզ բառերով. գ) թուական չկայ և չի եղել. չորս տառ գրելու չափ տարածութիւն է թողնուած Զեսամիք բանից առաջ (տես վերե), ոչ քերուած է, ոչ եղծուած, այլ ուղղակի բայց առանց որ և է հետքի. դ) Պետրոս Գետագարձի անուն չկայ. և ե) վեճելի է յիշատակարանի «Գրեցաւ շարունակ ածաշունչ տառի

շարականացս» բառերի խմաստը՝ եթէ ասենք, թէ պէտք է հասկանալ «չարունակութիւն ածաշունչ տառի շարականացս», ապա Յովհաննէս կրօնաւորը դրիչ է ձեռագրիս միմիայն երկրորդ մասի, 1ա—334b էջերը նորա աշխատանքի արդիւնքը չեն, այլ մի անյայտ ձեռքի. իսկ եթէ ընդունենք, որ և աւելի հաւանական է թուում մեզ, թէ պէտք է կարգալ «Գրեցաւ շարունակ (մակրայ) ածաշունչ տառ շարականացս», ապա Յովհաննէս կրօնաւորին պիտի համարենք 1ա—334b և այժմ ընկած թերթերից մի մասի գրողը, ինչպէս որ անանուն ստացողն էլ իրօք իրրե յաւելուած դրել է ընկած թերթերի վերջին մասը և արդի 335a—338a:

Վերջ ի վերջոյ հարկագրուած ենք ասելու, որ Պետրոս Գետաղարձի անունն ու ՆկԲ—1019 թուականը միանդամայն մտացածին են. Զենք կարող ընդունել, թէ կարինեանցի խղճուկ ցուցակը կազմողն այս ու այն կողմն է ընկել. այս ձեռագրի ժամանակը որոշելու համար ուսումնասիրութիւն արել և մեզ անյայտ աղբիւրից Պետրոս Գետաղարձի անունը գտել և նորա օծման թուականի հետ ցուցակում զետեղել. Մի այդպիսի նահապետական ցուցակ կազմողի համար գուցէ բաւական էր այս ձեռագրի յիշատակարանում կարգալ Հաղբատ և Յովհաննէս քաջ քարտող անունները՝ այս վերջինիս հոչակաւոր Յովհաննէս Սարկաւագը համարելու և ժամանակագրական շփոթութեամբ սորան Պետրոս Գետաղարձ նշանաւոր հայրապետի ժամանակակիցը դարձնելու, մինչզեռ սա կաթողիկոս է եղել 1019—1048 թուականն, իսկ Սարկաւագը վախճանուել է 1129 թուին: Խոստովանում ենք, որ այս ենթակրութիւնը շատ թոյլ է, բայց և խորապէս համոզուած ենք, որ ցուցակագրողը կամ ուղեղի վերայ անտեղի ձնչումն է գործ դրել և Պետրոս Գետաղարձի անունն ու ՆկԲ թուականը յօրինել և կամ Յովհաննէս անուան և ժամանակի շփոթութեան մէջ է ընկել: Մենք հնարաւորութիւն չունինք ստուգելու, թէ երբ է եղել Սատուածատուր արքեպիսկոպոսի վանահայրութիւնը Հաղբատում, բայց յամենայն դէպս ցուցակագրողն իրաւունք չունէր մէջ բերելու Գետաղարձի անունն ու հայրապետութեան առաջին տարին նշանակող ՆկԲ թուականը, որոնց մասին և հչ մի յիշատակութիւն չկայ ձեռագրի մէջ:

Այսպէս թէ այնպէս էջմիածնի մատենադարանի շատ նշանաւոր նամար 1535—1573 Շարականը գրուած է ոչ առաջքան Ժ—Ժ դար կարութական կարեսութիւնի ունի:

Մի քանի խօսք էլ էջմիածնի մատենադարանի շատ նշանաւոր նամար 1588 ձեռագիր Շարականի գրութեան ժամանակի մատին ինչպէս այս յօդուածի սկզբում յիշատակեցինք, մեր բարձմաշխատ

միաբանակից Սահակ վարդապետ Ամատունին այս խնդրով զբաղ-
ուել է *) և յանգել այն եղբակացութեան, թէ Շարականիս զրիչն
ու մեկենասը պէտք է ապրած լինին «ԺԱ. և ԺԲ.-ՐԴ դարերի մէջ-
տեղում», մէ կարծիք, որ մեզ համար անընդունելի է ներքին հի-
մունքներով։ Մենք դեռ մեր անդրանիկ աշխատութեան մէջ ասել
ենք. «Եյս 1588 համար ձեռագիրը չի կարող դրուած լինել ԺԳ
դարի վերջից կամ ԺԴ դարի սկզբից առաջ, որովհետեւ (հեղինակ-
ների շարքում) յիշատակում է Գրիգոր Անաւարդեցուն **): Այժմ
այս յայտարարութեան պիտի աւելացնենք. ամբողջ ձեռագիրը՝
1a—239b մի դրչի արդիւնք է. զասաւորութիւնը յետին դարերինն
է՝ երգեցէք որդիք սիոնի և այն սկսուածքով. 224b-ում «Զհոգոյն
սրբո զալստեան ութերորդ աւուրն. . . . տը զրիգոր կաթուղիկոսն
անաւարդեցին ասաց «բառերով ակնարկած շարականները զրի են
առնուած ոչ իբրև յաւելուած, այլ 152b—155a էջերում։ Ամեն կաս-
կածից վեր է, որ այս Շարականը զրուած է ոչ վաղ քան ԺԳ դարի
վերջերը։ Սակայն այս հանգամանքը բնաւ չի կարող նսեմացնել
սորա նշանակութիւնը. զիտական աշխարհում այսօր հայ Շարականի
ամենակարենոր ձեռագրերն են Վիեննայի Մխիթարեանների համար
202 և այս 1588-ը, որոնցից իւրաքանչիւրը որոշ տեսակէտից ան-
գուզական է։

Էջմիածնի մատենադարանում չկայ և ոչ մի ձեռագիր
Շարական, որի մասին կարելի լինէք հաստատապէս ասել, թէ
զրուած է ԺԳ դարից առաջ. հնագոյնները ԺԴ դարի առաջին կեսի
զործ են. ոռքա են. համար 1572' ԶՀկ=1328 թ., հմ. 1586' ԶՀմ=—
1329 թ., հմ. 1598' ԶԶ=1331 թ., հմ. 1619' ԶԶե=1336 թ. և հմ.
1600' ԶԶթ=1340 թուականին։

Ներսէս վարդապետ ՑԵՐ-ՄԻՒՋԵԼԻԵԱՆ:

Ս. Էջմիածնին։

*) Արարատ ամսագիր. 1894 թիւ, էջ 87—88.

**) Das armenische Hymnarium, Leipzig, 1905. էջ 84.